ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

թիվ 03-20

«01» փետրվարի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 1-Ա- 3-Ա որոշումները, թիվ 1,2 կարգադրությունները և աշխատակազմի քարտուղարի թիվ 1-3 հրամանները:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«19»հունվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 1-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 03.06.2010թ. թիվ 816-Ն որոշման, հիմք ընդունելով, որ ինքնակամ կառույցն ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հաշվի առնելով ՀՀ ԿԱԱԳԿՊԿ Ալավերդու ՏՍ 21.10.2010թ. թիվ ԴԹ-2221 գրությունը.

1.Օրինականացնել Նաիրի Մխիթարյանին պատկանող Թումանյան քաղաքի 2-րդ թաղամասի 6-րդ փողոցի թիվ 9 բնակելի տան տնամերձ հողամասում կառուցված 6.0 քմ գոմ և 9.7 քմ ջրավազան արտաքին մակերեսներով շինությունները:

2.Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը:

3.Ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու համար չգանձել վճարներ, որովհետև կառուցվել են 1968թ.:

4.Բնակելի տան փոստային հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, 2-րդ թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 9:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«20»հունվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 2-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ 2008թ. հունիսի 10-ին ընդունված և 27.04.2010թ. փոփոխված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահանջած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 12.08.2010թ. թիվ 1004-Ն որոշման, հաշվի առնելով, որ բնակելի տան հողամասը ընդգրկված չէ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ, չի հակասում քաղաքաշինական նորմերին և հիմք ընդունելով Մարիամ Սիմոնի Ազոյանի 20.01.2011թ. դիմումը.

1.Մարիամ Սիմոնի Ազոյանի և Վրույր Միհրանի Ազոյանի կողմից տիրապետվող Թումանյան քաղաքի Քոբեր թաղամասի թիվ 12 հասցեում գտնվող 1961թ. կառուցված բնակելի տունը և կից օժանդակ շինությունները, ինչպես նաև կառուցման և սպասարկման համար 400քմ տնամերձ հողամասը սույն օրենքի ուժով համարել Մարիամ Սիմոնի Ազոյանի և Վրույր Միհրանի Ազոյանի սեփականությունը՝ որպես սեփական գույք:

2.Մարիամ Սիմոնի Ազոյանին և Վրույր Միհրանի Ազոյանին պատկանող տնամերձ հողամասի ավել զբաղեցրած 0.0342 հա հողամասի համար գանձել համապատասխան վճարներ /0.0342X96 դր=32832 դր/:

3.Հողամասի սահմանները որոշվում են քաղաքապետարանի կողմից 0.0742 հա հողամասի համար տրված գլխավոր հատակագծով:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանումում:

5.Բնակելի տան հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, թաղամաս Քոբեր, տուն թիվ 12:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«29» հունվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 3-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 03.06.2010թ. թիվ 816-Ն որոշման, հիմք ընդունելով, որ ինքնակամ կառույցն ընգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հաշվի առնելով ՀՀ ԿԱԱԳԿՊԿ Ալավերդու ՏՍ 11.11.2010թ. թիվ ղԹ 2326 գրությունը.

1.Օրինականացնել Անետա Կրավչենկոյին պատկանող Թումանյան քաղաքի 2-րդ թաղամասի 6-րդ փողոցի թիվ 3/1 բնակելի տան նկուղային հարկում 66.1 քմ, 1-ին հարկում՝ 41.7 քմ և օժանդակ շինություններ համարվող խոհանոց՝ 14.1 քմ, բաղնիք՝ 5.2 քմ, ավտոտնակ՝ 21.9 քմ, գոմեր՝ 8.9 քմ, 18.9 քմ ընդհանուր արտաքին մակերեսով տարածքները:

2.Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը:

3.Ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու համար չգանձել վճարներ, որովհետև կառուցվել են 1978թթ.:

4.Բնակելի տան փոստային հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, 2-րդ թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 3/1 տուն:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«17»հունվարի 2011թ. ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ
ՏՆՕՐՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Թումանյան քաղաքի մշակույթի տան վերաբացման կապակցությամբ Թումանյանի քաղաքապետի օգնական Արման Մոսինյանին ժամանակավորապես նշանակել՝ որպես մշակույթի տան տնօրենի պաշտոնակատար:

2.Ստեղծել հանձնաժողով՝ մշակույթի տան գույքի հանձնում-ընդունում կատարելու համար՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Ե. Շաքարյան

անդամ՝ Ա. Ամիրջանյան

հանձնող՝ Է. Հախվերդյան

ընդունող՝ Ա. Մոսինյան

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«24»հունվարի 2011թ. ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17 կետի.

Թումանյանի քաղաքապետ Լ. Զավարյանին ս/թ հունվարի 25-ին 1 օրով գործուղել ք. Երևան՝ Համայնքների Միություն՝ խորհրդակցության:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«13» հունվարի 2010թ. Հրաման թիվ 1

# ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետարանի 1-ին կարգի մասնագետ օպերատոր Հերմինե Հովսեփյանին ս/թ հունվարի 14-ին 1 օրով գործուղել ք. Երևան՝ «Վեկտոր պլյուս» ՍՊԸ՝ ծրագրի վերանայման համար:

/ Աշխատակազմի քարտուղար՝ /Ռ. Շահվերդյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«19» հունվարի 2011թ. Հրաման թիվ 2

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետարանի առաջատար մասնագետ –հաշվապահ Անուշ Ամիրջանյանին ս/թ հունվարի 19-ին 1 օրով գործուղել ք. Վանաձոր՝ մրզպետարան բյուջեի տարեկան հաշվետվություն ներկայացնելու համար:

/ Աշխատակազմի քարտուղար՝ /Ռ. Շահվերդյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«24» հունվարի 2011թ. Հրաման թիվ 3

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետարանի վարորդ Արա Մկրտչյանին ս/թ հունվարի 25-ին 1 օրով գործուղել ք. Երևան՝ Համայնքների միություն:

/ Աշխատակազմի քարտուղար՝ /Ռ. Շահվերդյան/